600.0449.11.10.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հոկտեմբերի 2017 թվականի №449Ա
քաղ. Երևան

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ, ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՐՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 11-ի №272Ն որոշումը և հաշվի առնելով «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հոկտեմբերի 9-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության անվամբ վերաձևակերպել՝
   1) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության կողմից՝
      ա. 2005 թվականի մայիսի 11-ին «ԱրմենՏել» համատեղ ձեռնարկություն փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված №ՌՌԳ/ԱՏ-002/1, №ՌՌԳ/ԱՏ-005/1, №ՌՌԳ/ԱՏ-007/1, №ՌՌԳ/ԱՏ-008/1 և 2005 թվականի սեպտեմբերի 1-ին տրամադրված №ՌՌԳ/ԱՏ-019/1 ռադիոէլեկտրոնային միջոցների տեղադրման համար ռադիոհաճախությունների հատկացման թույլտվությունները, ինչպես նաև «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոռելեային կապի գծերի շահագործման №ՌՌԳ-Ա2 թույլտվությունը.
   2) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
      ա. 2007 թվականի օգոստոսի 24-ի №341Ն որոշմամբ հաստատված «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված №60 լիցենզիայի փոփոխ-

ված տարբերակը.

բ. 2007 թվականի ապրիլի 20-ի №187Ա, 2007 թվականի օգոստոսի 17-ի №330Ա, 2007 թվականի հոկտեմբերի 1-ի №391Ա, 2007 թվականի դեկտեմբերի 14-ի №651Ա, 2009 թվականի նոյեմբերի 11-ի №719Ա, 2009 թվականի դեկտեմբերի 23-ի №819Ա, 2010 թվականի հոկտեմբերի 27-ի №563Ա, 2011 թվականի ապրիլի 27-ի №207Ա, 2011 թվականի հունիսի 29-ի №311Ա և 2012 թվականի դեկտեմբերի 20-ի №537Ա որոշումներով «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման համապատասխանաբար՝ №0124, №0163, №0177, №0289, №0678, №0694, №0855, №0931, №0946 և №1021 թույլտվությունները.

գ. 2006 թվականի սեպտեմբերի 15-ի №202Ա, 2010 թվականի հոկտեմբերի 27-ի №564Ա և 2011 թվականի դեկտեմբերի 7-ի №563Ա որոշումներով «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման համապատասխանաբար՝ №0019, №0856 և №0966 թույլտվությունները.

դ. 2007 թվականի հունվարի 19-ի №8Ա որոշմամբ երկարաձգված և նոր խմբագրությամբ շարադրված «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության ռադիոհաճախականությունների օգտագործման №0054 թույլտվությունը.

ե. 2007 թվականի դեկտեմբերի 28-ի №683Ա որոշմամբ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում համարների զբաղեցման թույլտվությունը.

զ. 2015 թվականի նոյեմբերի 25-ի №391Ա որոշմամբ «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային ամրակցված հեռախոսային ցանցի ոչ աշխարհագրական կոդերի և համարների զբաղեցման թույլտվությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
11 հոկտեմբերի 2017թ.
ժամը 16^{00}